ԱՄԵՆԱՑՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՔ»ի
ՏՈՔ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Ձեռագիրք Չեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Սմէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅՔ

HAÏK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D. Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՆՈՅԵՄԲԵՐ 15 1891 Թիւ 22

Entered as second-class mail matter. at P.O. New York. N. Y

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ—սակցական Ս՝ալէ—անդ—ՐԷ—ն — Տէսարան-է Հայաստան — Նամակ Ընէն-էն. Կարէ—որ Քաղաք-ը—ՐԷ—ն — Ընդէրվարական—ՐԷ—ՆԷ— Հայի. Խնդիրն. — Նամակ Երզնկայէն — Երաժ՝ Հանդէսն — Ոսֆֆէի Դագաղի վերայ՝— Իմ Զէ—նապէտը — Ալէ— այլ

ԲԱՅՈՒՆՆ Է

ՀԱՅՔ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԵՊԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1892 ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Հայք»ի առաջի տարին կը բաղորի մէկ ամիսէն, այսինքն երկու թիւ միայն կը մնայ մեզ հրատարակել ներկայ տարին աւարտելու համար։

Թերթիս երախայ տարին պատուեցաւ բարոյական յաջողութեամբ մի օր կ՝անցնի մեր բաղոր հպարտ ակընկալութիւն։

Բովանդակ Հայ Աշխարհի մէջ ջերմ համակրողներ գրաւ «Հայք» և ունի մշակեալ և բանիմաց բաժանորդներ ի Ֆռանսա, յԱնգղիա, ի Պուլկարիա, ի Ռումանիա, Եգիպտոս, ի Հնդկաստան, ի Ճավա, ի Պարսկաստան, ի Ռուսաստան և ի Թուրքիա. ինչպէս նաև ի Միացեալ Նահանգս ամեն ուր որ Հայեր կը գտնուին։

Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեմք հրապարակաւ այն ուսեալ և ազնուամիտ հայրենակցաց որք այլ և այլ գաղթականութեանց մէջ յարեան իբրև խնամակալ «Հայք»ի և անձնուիրաբար գուն գործեցին բաժանորդներ գտնել և յսամախել շարունակ։ Ի նոցանէ կը խնդրեմք նոյն խանդավառ աջակցութիւնն շարունակել, զոր անհրաժեշտ կը նկատեմք թերթիս գոյութիւնն պահպանելու համար յօգուտ Հայ Դատին։

Կրկնապատիկ պիտի լինի մեր շնորհակալութիւն եթէ մեր բաժանորդք ԱՆՑԱՊԱՂ նորոգեն իրենց բաժանորդագրութիւն այնպէս որ Յունվար 1 ի թիւն հրատարակելու ատեն կարենանք ճշգրտամերմ գաղափար մ՝ընդունած լինիլ մեր բաժանորդաց թուոյն աճման մասին և ըստ այնմ տալ թերթիս զարգացում մի եթէ կարելի է

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Հայոցս մէջ կուսակցութեան վերայ խօսելով մեր նախորդ թուոյ մէջ՝ արդարացուցինք կուսակցութիւնն, մանաւանդ թէ անխուսափելի և օգտակար ներկայացուցինք զայն։

Բայց ինչպէս ամեն օգտակար բան, նաև կուսակցութիւնն, աւա՜ղ, ո՛րքան յաճախ կը չեղի օգտակար ուղղութենէ և չարեաց պատճառ կը լինի։ Ամեն ազգի մէջ ալ կան բաղում անհատներ այնպիսի դժբաղդ բընաւորութեան տէր որ զայնս ի ծայրայեղութիւն կը տանի ամեն բանի մէջ։ Այս կարգի անհատն տրամադիր է իւր կուսակցութեան վերայ հպարտ համարում ունենալ, և իւր պետին կարծիքն ընդունիլ իբրև անսխալ պատգամ։ Նորա մեծագոյն բաղձանքն է իւր պետին փառաւորումն, և իւր կուսակցութեան և քաղաքականութեան յաղթութիւնն։ Խեղճ մարդն զմիջոցն իբրև վախճան կը նկատէ, ա՛յնքան կարճատես է. կը կարծէ թէ կուսակցութիւնն իւր յատուկ շահն և փառքն ունի, այնց ի խնդիր է փութոյ պնդութեամբ՝ անտես անելով ազգին հանրային շահերն։ Ոմանք այն աստիճան կը լեցուին կուսակցական ոգւով մինչև չտեսնել և չհասկնալ դիմադիր կուսակցութեան փաստերն. և երբ զայնս հերքելու կ՝ելնեն, այնպիսի արտառոց առարկութիւններ և խղճալի փաստեր յառաջ կը բերեն որք կուրացեալ մտքի յայտնի նշան են։ Ցաճախ նաև գիտութեամբ կը խեղաթիւրեն հակառակորդին խօսքերն, անոնց տարբեր իմաստ կ՝ընծայեն, կամ թէ նորա բանից դամ գրուածոց մի մասն այնպէս կ՝անջատեն յարակից իմաստներէն որ բոլորովին տարբեր իմաստ հանեն անկէ և ունկնդիրներու դատողութիւնն այնպէսով յաջողին մոլորցուցանել.

Հայ մամլոյ և հայ ընկերութեանց մէջ դիմախօսներ չափազանց յաճախ տուած են կուսակցական ոգւոյ զզուելի օրինակներ. մեք պէտք չեմք տեսներ օրինակներ ի մէջ բերել ասա որպէս զի այս կամ այն կուսակցութիւնն վիրաւորելու խօսք մ՝ըրած չլինիմք։ Ֆռանսական օրինակ մի յիշեմք սակայն ասա։ Ժիւլ Սիմոն հեսեւեալն կը պատմէ. — Գէռթիէ կը հարուածէր Էլսէօֆի երկաթուղին, գէշ շինուած, կ՝ըսէր, և գէշ վարեալ։ Գէշ շինուած, տեսցուք զայդ, կը պատասխանէր նախարարն, բայց գէշ վարե՞ալ, ինչէ՞ն գիտես։ Գիտեմ զայն իմ իսկ աչօք. երեկ իսկ այն ճամբով ուղեւորեցայ։ — Անկարելի՜ է այդ, վասն զի դեռ չընթանար։ — Կ՝ընթանա՛յ։ — Չկարէ ընթանալ առանց հրովարտակի յինէն ստորագրեալ. և ես հրովարտակ ստո-

բագրած չեմ: — Կ'ընթանայ առանց հրավարտակի՛: (il marche sans arrete) — · Եւ բոլոր ժողովն ծիծաղել սկսաւ:

Գէոլթիէի նման Հայեր հազուագիւտ չեն որք իրենց կարծիքն հաստատելու համար սուտ անգամ խօսին: Ի՞նչ կ'ըսեմ, սո՞ւտ· աւելի գէշ· կը պլպարսեն իսկ· իրողութիւններն խեղաթիւրել բաւ չհամարելով կը յանդգնին խծբծել անձնականութիւնդ և չարժաութիններդ,

Ազնիւ մարդն կը սոսկայ այդպիսի ընթացքէ: Նորա նշանաբանն է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՅԱՄԵՆԱՅՆԻ ԵՒ Ի ՎԵՐ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ· նա զգեղեցիկն կը փնտռէ յարուեստի, զճշմարիտն՝ ի գիտութեան և զարդարն ի քաղաքականութեան: Ոչ արդարութիւն և ոչ գեղեցկութիւն իսկ կարեն երբէք լինել առանց ճշմարտութեան:

Այն որոյ հզօրագոյն կիրքն է ճշմարտութեան սէրն, պատրաստ է ըսել և ընել ինչ որ ճշմարիտ կը ճանաչէ· ո՛և իցէ անձնական՝ բարեկամական կամ կուսակցական նկատողութիւն բաւական զօրութիւն չունի զնա ճշմարտութենէ բաժնելու· նա կը լինի որ իւր բարեկամին հակառակ քուէ կու տայ, և կը լինի ալ որ իւր հակառակորդին ի նպաստ քուէ կու տայ և իրեն հակակիր եղող անձի մի յատկութիւններն կը գովէ: Երբ կը համոզուի թէ կարծիքն զոր յայտնած էր յանցեալումն՝ սխալ է, կամ դատողութիւնն զոր ըրած էր՝ թիւր է, առանց ամաչելու կը խոստովանի և ինքզինք կ'ուղղէ, գիտէ թէ այդ կրնայ փոփոխամտութիւն կամ ակարամտութիւն երեւնալ ոմանց, բայց փոյթ չընէր, գոհ է երբ ինքզինք ճշմարտութեան հետ գիտէ:

Նոքա որք « Հայք » ի խմբագիրն ի մօտոյ կը ճանաչեն, գիտեն թէ նա հաւատարիմ և անկեղծ ախոյեանն է ճշմարտութեան· Հնչակեանք, Փորթուգալեանք, ամենայն գործիչք, կուսակցութիւնք և գրիչք հետ զհետէ աւելի պիտի համոզուին թէ « Հայք » անկեղծութիւնն ի վեր կը դասէ քան ամենայն պատիւ, և ճշմարտութիւնն կը ճանաչէ բոլոր նեցուկներու հզօրագոյնն:

ՏԵՍԱՐԱՆՔ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա·

Յուսիկ 13 տարեկան էր, իւր քոյր Անուշիկ՝ 11 տարեկան, և եղբայրն Գառնիկ՝ 8: Երեքն ի միասին դպրոց կ'երթային: Օր մի Անուշիկ հեւալով տուն հասաւ միւսներէն առաջ, և « հարսա՛ » ըսաւ յուզուած և դալուկ շրթամբ, « Տաճկին տղան պատռեց Յուսիկին գլուխը, արիւնը աղբիւրի պէս կու վազէ :»

Մայրիկ սոսկալի կերպով դժգունեցաւ այնպէս որպէս թէ բոլոր արիւնն իւր երակներէն հոսուած լինէր:

Եւ ահա Յուսիկ և Գառնիկ ալ հասան: Եւ տեսարանն խառնաշփոթեցաւ: Մեծ մայր, մայրիկ, վիրաւորն Յուսիկ, Անուշիկ, Գառնիկ, և դեռ տունն մնացող կրտսերագոյն Սիրաք, ամենն ալ բան մի կ'ըսէին, բան մի կը հարցնէին, մեծ մայրն, 70 ամեայ, իւր անէծքներու անյատակ տոպրակն բացած էր, և աղեկէզ սրտիւ դիտելով ու շօշափելով վէրքն կ'ըսէր « Ձեռքունքը չորնայ ու կռնծի՛, տուն չի հասնի՛, մարը խերը չի տեսնէ՛, կրա՛կ թափի վրան, երկնաւորէն՛ զանէ, կէնճ արևը հողը դընէ պիլէքիմ··:» Իսկ մայրիկ, որ տղայկանութեան անկողնոյն վերայ նստած՝ խանդաղատանօք և մորմոքեալ սրտիւ կը դիտէր թէ ինչպէս արիւնն կը սրբէին և գլուխն կը փաթթէին Յուսիկին, համոզուեցաւ թէ վէրքն ոչ շատ խոր էր և ոչ ալ արիւնն աղբիւրի պէս վազած· Յուսիկ թաշկինակն վէրքին վերայ սեղմած և արիւնն արդէն դադարած էր երբ տուն հասաւ:

Բաւական հանդարտած էին ամենն ալ երբ ընդ երեկն խանութէն վերադարձան Յուսկան հայրն՝ Նիկողոս Աղան, և մեծ եղբայրն՝ Գառակ:

Նիկողոս Աղան խոհական և լուրջ էր բնութեամբ, շատ պանդխտած և շատ փորձառու: Գառակ 21 տարեկան էր, հուր ու բոց, շատ հայրենասէր և շատ ուսեալ:

Հազիւ դռնէն ներս կը մտնէին և ահա Անուշիկ դէպքն կ'իմացունէր նոցա:

Ի՞նչպէս եղաւ, հարցուց Գառակ:

Եւ ահա ամեն գլխէ ձայն մի:

Յուսիկի՛ն կը հարցանեմ, ըսաւ Գառակ: Յուսիկ քանի՞ տարեկան կար տղան:

Երկուք էին, ըսաւ Անուշիկ: Մէկը Խանարենց կարոյին չափ կար, մէկալն ալ քիչ մի պզտիկ էր:

Չէ՛, ըսաւ Յուսիկ, ո՞ւր տի կենար կարոյին չափ, մեծը քան զիս երկու տարի մեծ կար ու չկար: Թող մինակ լինէր որ տեսնէր, անոր քար նետելը կու սորվեցընէի:

Դուք ի՞նչ արիք որ քար նետեցին ձեզի, հարցուց հայրիկ:

Մեք բան չարանք, կու գայինք··· պատասխանեց Յուսիկ:

Հը՛, Գառնիկ բռունց չցուցո՞ւց, « վուռուռում, օլա՛ն » չըսա՞ւ, ընդմիջեց Անուշիկ:

Ան իմ տոպրակս ինչո՞ւ կու քաշէ, էլպէթ ես ալ կու զարնի՛մ, ըսաւ Գառնիկ:

Իրաւ է, աւելցուց Յուսիկ, ան անոր գրքին տոպրակին զարկաւ, վար տի ձգէր, ան ալ անոր « վուրուրըմ » ըսաւ: Ատոր վրայ անդիէն մէյ մ'ալ քարն եկաւ, Գառնիկին նետեց, ինծի դպաւ:

Մեծ մայրն նորոգեալ մորմոքով քանի մի անէծքներ արտասանեց յանժամ — ճիվը կոյրի տուն չի հասնի, աչկունքը կուրնա՛յ, ձեռքունքը չորնայ, եօխ ու մուրտա ըլնի··· անաղկատոր սփռուի:

Ես անոր ճիվը կու կոտրիմ, մամա՛, ըսաւ Յուսիկ, գլուխն ալ կու պատռիմ, ձեռքն ալ կու չորցնիմ օր մի ուր ինք մինակ ռաստ բերիմ:

Ա՛լ ինչ կ'անես, ըսաւ Նիկողոս աղայ, յանդիմանական եղանակաւ մի:

Գառնիկն քար առաւ, Տաճկին տղուն ի նետէր ես ձեռքն բռնեցի, ըսաւ Անուշիկ:

Ա՛, ըսաւ հայրիկ, դո՞ւն ալ քար նետող ես եղեր:

Ես Ձեզի հարիւր անգամ չի՞մ ըսեր թէ քարէն արուն կ'ելլէ, յարեց մեծ մայր:

Գառակ, որ մայրիկին քով նստած՝ նորա բազկերակն կը զննէր այդ պահուն, ըսաւ· — Իրաւ է, մամա՛, քարէն արիւն կ'ելնէ, տես Յուսկայ արիւնն ինչպէս ելած է Տաճկին քարէն, և եթէ այդ արիւնն տեսնելէ յետոյ Գառնիկ փորձած լինէր Տաճկի լակոտին արիւնն հանել, ես գոհ պիտի լինէի:·

— Ի՞նչ կ'ըսես, ընդմիջեց հայրիկ, տղայը բա՞ն կու սորվեցնես որ վաղը քար նետեն չնուըսցը ու մեր վրայ ձան բերեն:

— Այո՛, ես կ'ըսեմ թէ քար նետող Տաճկին քար նետելու իրաւունք ունին Հայ տղայք, արիւնն հանողին արիւնն թող հանեն, թող վար չմնան Տաճկին լակոտներէն: Թափ նետողին թ'ափ թող նետեն, քար նետողին քա՛ր, ճիրխ նետողին ճիրխ՛ա, աքացողին աքացե՛ն, ակն ընդ ական և ատամն ընդ ատաման:

— Պատառ մի Գառնիկն անգամ ատ դատը սորվեր է, ըսաւ հայրիկ, վուռուռում, քէօքրիմ ըսել է սկսեր: Տես՛, Սիրաքն ալ իր փառէ թուրը կու շարժէ: Դուն տղաքը գլխէ տի հանես տանկով, Աստուած վերջը բարին անէ:

— Տաճկին հետ հո՞ն տ'ելլես, աւելցուց մեծ մայր, անոնց հետ Աստուած հաւն ելլէ:

— Հապա թողու՞նք որ մեր տղաքը քարե՞ն, ծեծեն, վախցունե՞ն: Մենք իրենց շո՞ւնն ենք: Կամ թէ տղաքը այլ ես դպրոց չխրկե՞նք, տան մէջ բանտարկենք, անկի՞րթ պահենք: Տաճկին հետ հուն ելնելուդ

կերպը կայ. մէկ զարնողին երկու՛ք զարկ, այսօր, վաղն և մէկալ օր և միշտ, դո՛ւ զարկ, ա՛ն ալ թող զարնէ, ամեն Հայ տղայ թող զարնէ, և պիտի տեսնես թէ Տաճկներն ինչպէս կը խելօքնան, սա նոր կեավուռներն առջի կեավուռներուն պէս չեն եղեր պիտի ըսեն, պիտի սկսին քաշուիլ մենէ, և մեր տղաքն ալ ու ամենուն տղաքն ալ անվախ պիտի կրնան երթալ դալ։

— Գոռա՛կ, ըսաւ հայրիկ, դուն հիւքիւմէթը դիտե՞ս, դատ վարած ունի՞ս, բանտ մտե՞ր ես։ Թող Հայ տղայ մի Տաճկէն արիւն հանէ, տես ինտոր անոր հօրը քսակը կը պարպեն և թէօպէ անել կու տան։

— Հա՛րկաւ, ըսաւ Գոռակ, քաջութեան օրինակ տուող ընտանիքներն պիտի տաժեն կրկին ու կրկին մինչև որ բոլոր ժողովուրդն քաջութեան ոգւով խմորի։ Ես չեմ ըսեր թէ ամեն դէմ ելլող տաճկի քար թող նետեն, քաւ լիցի, այլ կը պնդեմ թէ զարնողին պէտք է զարնեն, և անանկ զարնեն որ Տաճկին աչքը վախնայ։ Մենք մեր պզտիկներուն սովրեցնելու ենք թէ Տաճիկն ալ մեզ նման մարդ է, քան զմեզ աւելի ո՛չ ոյժ ունի ո՛չ իրաւունք։ Նայէ Անուշակը ինչքան կը չափազանցէ ամեն բան. Տաճկին տղան հսկա՛յ է երեւցեր իրեն, արիւն աղբիւրի պէս վազե՛ր է, ինք ալ եկեր անեցաց սիրտը թաւնդ է հաներ. հարսային բազկերակը այս առտու 70 կը նետէր, այժմիկ 85 կը նետէ։ Անուշա՛կ, քեզի քանի անգամ ըսեր եմ թէ աղջի՛կ բան մը որ կը պատահի, սիրտդ փորդ թող չիյնայ, ինչ որ է ան ըսէ. արիւնը աղբիւրի՛ պէս կու վազէ, ո՞ւր է վազած արիւնը- տե՛ս ինչպէս պէտք է ըսէիր կամացուկ և հանդարտ. Հարսա՛, վեր չէյնիս, Ցուսիկին գլուխը քչիկ մի արիւնեցաւ, բան չկայ։ — Եւ քանի որ քիչ մի արիւներ էր, կրնայիք երեսն ալ լուալ, չորցնել, անանկ ներս դալ որ հարսան երեսն ալ չատ արիւնոտ չտեսնէր։

— Ադ խրատ աղէկ է, ըսաւ հայրիկ, ահա տասնկ խրատներ տուր։

ՆԱՄԱԿ ԱԹԷՆԲԷՆ

Հետեւեալն յղուած է մեզ տնտեսագէտ (docteur en science economipue) Տիար Ն. Կարապետեանի կողմէն։

ԿԸՐԵՒՈՐ ՌԱՑԸՏՐՈՒԹԻՒՆ

Յարգոյ Խմբագիր.

«Հայք» լրագրի 18 համարի մէջ Ձեր Հնչակեան կուսակցութեան ծրագրի մասին արած քննադատութեան վերաբերեալ կամենամ մի քանի կարեւոր բացատրութիւններ տալ. որ հետեւեալն են, նախ՝ խօսելով ընկերվարականութեան մասին, դուք ասումէք թէ «ընկերվարականութիւնն թէ և գեղեցիկ բայց չ'փորցուած դրութիւն մէ և գուցէ փորձն մի օր ցուցնէ անոր անհաշտելիութիւնն յառաջդիմութեան պայմանաց հետ»։ Այս մասին հակառակը պնդել և Ձեզ հետ վիճաբանութեան մէջ մտնելու — այժմ ոչ ժամանակը և ոչ էլ տեղն է, նամանաւանդ որ դա շատ երկար կը լինէր, միայն այս չափը կ'ասեմ որ հիմայ թէ Եւրոպայի և թէ Ամերիկայի բոլոր նշանաւոր գիտնականները ու յայտնի քաղաքա — տնտեսագէտները խոստովանուում են թէ ընկերվարականութիւնը յառաջդիմութեան աւելի ևս կ'նպաստէ քան այժմեան կապիտալական դրութիւնը։ Իսկ դրա հակառակը պնդողներ՝ կամ նրանք են, որոնք կապիտալիստների շրջանին են պատկանում՝ լինին գիտականներ թէ դիւանագէտներ կամ թէ չէ նրանք են, որոնք բոլորովին ծանօթ չեն քաղաքա — տնտեսութեան գլխաւոր օրէնքների ու պայմանների հետ։

Երկրորդ. Դուք այն կարծիք էք յայտնում թէ ընկերվարականութեան մասին խօսքը Հայերին համար դեռ ևս վաղաժամ է, նա մանաւանդ որ Եւրոպայի բարձրագոյն յեղափոխականները անդամ այդ մասին չեն երեւակայած։ Մի մտնաք որ ընկերվարականութեան գաղափարը թէ և շատ տարիներէ ի վեր գոյութիւն ունի, բայց նա գիտական հողի վրայ դրուեցաւ ու կանոնաւոր կերպով սկսեց զարգանալ մի միայն այս դարիս կէսից, հետեւապէս Եւրոպայի յեղափոխականները չէին կարող նրան պարզ ու որոշ կերպով արտայայտել, ինչպէս անում են այսօրուան Եւրոպայի և Ամերիկայի ընկերվարականները։ Բացի դրանից՝ ի՞նչ է ընկերվարականութիւնը։ Նա այնպիսի մի հասարակական կազմակերպութիւն է, որտեղ բոլոր հասարակութիւնը կամ բոլոր ժողովուրդը պիտի լինին կատարեալապէս ազատ ու հաւասար թէ քաղաքականապէս և թէ տնտեսականապէս, այսինքն բոլոր մարդիկ պիտի ունենան հաւասար պարտականութիւններ և հաւասար իրաւունքներ, ամենքն էլ պիտի աշխատին իրենց ոյժերի համաձայն և պիտի վայելեն իրենց պէտքերի համաձայն։ Հիմակ ի՞նչ է եղել դարերից ի վեր եղած ժողովրդային յեղափոխութիւնների նպատակը։ Միթէ միևնոյն հաւասարութիւնը և միևնոյն արդարութիւնը չէ՞ին պահանջում բոլոր ժամանակաց յեղափոխութիւնները։ Միայն թէ մարդկութիւնը և գիտութիւնը զարգացած չը լինելու համար, այդ յեղափոխութիւնները բոլորովին տարբեր պայմանների մէջ էին փնտռում թէ ազատութիւն, թէ հաւասարութիւն և թէ արդարութիւն։ Օրինակի համար՝ Քրիստոս նոյնպէս հաւասարութիւն էր ուզում մարդոց մէջ, բայց նրա կարծիքով այդ հաւասարութիւնը կարող էր լինել, եթէ հարուստները ողորմած լինէին և իրենց հարստութիւրից աղքատներին առատութեամբ ողորմութիւն տային։ Իսկ այս դարուս յեղափոխականները կարծում էին թէ բոլոր անհաւասարութիւնները կ'վերնան, եթէ քաղաքական լիակատար ազատութիւն լինի ընդհանուր քուէարկութեամբ հանդերձ, բայց բոլոր փորձերս ցոյց տուին և գիտութիւնը հաստատեց թէ առանց տնտեսական հաւասարութեան չ'կայ լիակատար ազատութիւն։ Եթէ իրերի դրութիւնը այսպէս է, եթէ ժամանակը, փորձերը և գիտութիւնը մեզ բերել այդ կետին են հասցրել, միթէ մենք, այսօրուան յեղափոխականներս մեղանչա՞ծ կը լինինք ընկերվարականութեան կամ ճշմարիտ ազատութեան գաղափարները մեր ժողովրդի մէջ տարածելու համար։ Եւ մի՞թէ մենք յանցաւոր չենք լինի ժողովրդի և մեր խղճի առաջ, երբ ճշմարտութիւնը գիտնալով հանդերձ, խաբենք թէ մեզ և թէ ժողովրդին, ասելով որ նա բոլորովին ազատուած ու երջանիկ կ'լինի երբ թուրքի լծից կ'ազատուի։

Մեզ առարկում են և Դուք էլ ձեր քննադատութեան մէջ կրկնումէք այդ առարկութիւնը թէ՝» թէ և ընկերվարութիւնը լաւագոյնն է բոլոր հասարակական կազմակերպութեանց, բայց նա այսօր չի յարմարի մեր ժողովրդեան, մենք անկարող ենք այժմ ընկերվարականութիւն մտցնել Հայաստանի մէջ։» Միթէ մենք, Հնչակեաններս չ'գիտե՞նք որ այժմ անկարելի է ընկերվարականութիւն մտցնել Հայաստանի մէջ և եթէ մէկը կը յանդգնի ասել թէ կարելի է, մենք առաջինն կ'լինինք որ կ'խնդանք այդպէս ասողի վրայ, և միթէ այդ անկարելիութեան համար չէ՞ որ մեր ծրագրի մէջ ընկերվարականութիւնը դրուած է իբրև հեռաւոր նպատակ։

Բայց ուրիշ բան է Հայաստանի մէջ ընկերվարականութիւն մտցնելը և ուրիշ բան նրա մասին ժողովրդի մէջ գաղափարներ տարածելը. առաջինը անկարելի է, բայց երկրորդը շատ դիւրին է և միևնոյն ժամանակ շատ անհրաժեշտ, որովհետև նա ճշմարտութիւն է և որովհետև մենք չենք կարող խաբեբաներ հանդիսանալ թէ մեր խղճի և թէ ժողովրդի առաջ։ Դուք և Ձեզ հետ շատերը մեզ ասումէք թէ՝ «ի՛նչոր անկարելի է, նրա մասին առ այժմ չ'պէտքէ խօսել, այլ պէտք է աշխատիլ և ձգտել նրան, ինչոր կարելի է ձեռք բերել։» Թոյլ տուէք ասելու որ դա բոլորովին սխալ կարծիք է, որովհետև այն ինչ որ մեզ կարելի է ձեռք բերել ոչ

մենք կարող ենք այժմից որոշել և ոչ Դուք, մեր ճակատագիրը մեր ձեռքին չէ, և այն ինչ որ մենք ստանանք կախուած է շատ տարբեր պայմաններից, այնպէս որ այդ կարելին սահմանը չափազանց դժուար է այժմից որոշել, միայն թէ մենք, յեղափոխականներս, որ ժողովրդի անկեղծ բարեկամները և միանգամայն ղեկավարներն ինք ուզում հաղթանակ, պարտաւոր ենք ուսումնասիրել և պարզ կերպով որոշել թէ՝ ժողովուրդը ի՞նչ պայմանների և ի՞նչ հանգամանքների մէջ կարող է ազատ և երջանիկ լինել, և ի՞նչ ուղիով պիտի ընթանայ որ կարողանայ այդ ազատութեանը և երջանկութեանը հասնիլ։ Այս բաները պարզ կերպով ծրագրելուց յետոյ, մենք պէտք է մտնենք ժողովրդի բոլոր խաւերի մէջ ու տարածենք մեր գաղափարները ամենայն ճշտութեամբ, պէտք է յեղափոխութեան մղենք նրան երբ հագամանքները յեղափոխութիւն կ'պահանջեն և պէտք է խաղաղ—յառաջդիմութեան առպարէզի մէջ աշխատինք երբ որա շրջանը կը լինի և ամեն ժամանակ պարտաւոր ինք ձգտել միևնոյն կէտին ու նպատակին, ինչ որ առաջուց արդէն նկարագրել ենք, այն է մեր ժողովրդի ազատութեան և երջանկութեան։ Առաջին յեղափոխութիւնը կարող է մեզ շատ չնչին բան տալ, գուցէ նոյն իսկ մեր ծրագրի մէկ քսաներորդ մասը չ'լինի, բայց այդ ո՛չ կը նշանակէ թէ մենք պիտի դադարինք մեր գործունէութիւնից և ոչ էլ մենք պիտի մերժենք այդ չնչին բանը ասելով թէ՝ «կամ մեր ուզածը ամբողջապէս պիտի ստանանք կամ թէ ոչինչ չենք վերցնի.» ընդհակառակը մենք օգտուելով ամէն մի փոքրիկ արտօնութիւնից պիտի յառաջանանք դէպի աւելի մեծը։ Եւ քանի որ մեր ժողովրդին հենց սկզբից ներկայացրել ենք մեր ամբողջ ծրագիրը բացատրելով նրան այն բոլոր պայմանները որի մէջ նա կարող է լիակատար ազատութիւն ունենալ և չենք խաբել նրան թէ Թուրքից ազատուելով դու բոլորովին երջանիկ կ'լինես, ժողովուրդն էլ դիւրութեամբ չի շլանայ փոքրիկ արտօնութիւններով և միշտ հաւատարմութեամբ մեր յետևից կ'գնայ։

Այժմ ասեմ մի քանի խօսք դիւանագիտական միջոցների մասին։

Մենք, Հնչակեաններս, մերժումենք դիւանագիտական միջոցները, որովհետև համոզուած ենք որ այս կամ այն մեծ պետութիւնը երբեք մեզի չի օգնիլ մարդասիրական կամ քրիստոնէական զգացմունքներից դրդուած, այլ նրանց օգնութիւնը կ'լինի միմիայն իրենց շահերի դրդմամբ։ Այս միևնոյն կարծիքը, յարգոյ Խմբագիր, Դուք յայտնում էք նոյն իսկ «Հայք» ի վերջին 19 համարի մէջ Պարսից շահին ուղերձ ուղարկելու առթով։ Մենք նոյնպէս համոզուած ենք որ ամէն մի պէտութիւն աւելի լաւ գիտէ իր շահերը, մանաւանդ Արեւելեան երկրների վերաբերեալ քան թէ մենք։ Եթէ այդպէս է, ուրեմն էլ ինչ կարիք կայ մեզ այս ու այն պետութեանը աղերսագիր տալու կամ նրանց բացատրելու թէ նրանք այս կամ այն շահերը ունին մեր երկրի վերաբերեալ-

Միթէ Հայերիս կողմանէ մի որ եւ է դիմում եղ՞ած էր Ռուս կառավարութեանը երբ նա Սանստիֆանոյի դաշնագրի մէջ 16 երորդ յօդուածը մտցրեց։ Հանգուցեալ Ներսէս պատրիարքի դիմումը եղաւ Բերլինի դաշնագրութեան ժամանակ, բայց չ'կարծէք թէ 16 երորդ յօդուածը այդ դիմումի հետեւանքն էր. Անգլիան, տեսնելով որ Ռուսաստանը 16 որդ յօդուածով կամենում է Հայաստանի վրայի հսկողութիւնը իրեն վերապահել, որ մի պայծառ օր էլ մի որ եւ է առիթ գտնելով կըլլէ նրան, 16 որդ. յօդուածը փոխել տուեց 61 որդի. որով այդ հսկողութիւնը վերապահել տուեց Եւրոպական ամբողջ դիպլոմատիային։ Ուրիշ օրինակ. յայտնի է որ Անգլիան պահպանողական կուսակցութիւնը դէմ է Թուրքիայի բաժանմանը, իսկ ազատամիտ կուսակցութիւնը ընդհակառակը սաստիկ հակառակ է այդ հիւանդ կառավարութեան ամբողջ մնալուն, և ահա այդ կուսակցութիւնները գաստ գաստ ուղարկում են իրենց թղթակիցներին և գործակալներին Թուրքիայի բոլոր կողմերը, պահպանողականները չարունակ հաղորդում են թէ Թուրքիայի մէջ կատարեալ անդորրութիւն է տիրում, թէ Թուրքիայի կառավարութիւնը շատ կանոնաւորէ ևայլն ևայլն, իսկ ազատամիտները դրա բոլորովին հակառակն են դրում և բացի դրելը նոյն իսկ դրդում են Թուրքիայի այս ու այն ժողովուրդներին խլրտումներ հանել, յեղափոխութիւն անել։ Այդ թղթակիցներից ու գործակալներից պակաս թւով չ'գնացին և չարունակում են գնալ մեր Հայաստան էլ։ Ասացէք խնդրեմ, միթէ այդ բոլորը մեր Լօնտոնում եղող դիւանագէտների չնորհ՞ով են կատարում։ Միթէ Եմենի Արաբն՞երն էլ դիւանագէտներ ունէին Լօնտոնում, որ այսօր Անգլիացիները նրանց օգնում են զէնքերով ու նոյնիսկ թնդանոթներով։ Ոչ՛, ոչ՛ և հազար անգամ ոչ՛ այնտեղ ուրշահեր կան միանգամայն աւելորդ են խնդիրները ու աղերսագիրները։ Մէկ տարի առաջ Անգլիան ամէն կերպ աշխատում էր Կրէտէի մէջ խլրտումներ ու յեղափոխութիւն հանել, իսկ այսօր երբ քաղաքական հորիզօնը բաւական կնճռոտուել է, նա հակառակն է աշխատում. չ'թողնել Կրէտացիներին ապստամբել, որովհետև վախենում է թէ մի գուցէ անյարմար ժամանակ պայթի ապստամբութիւնը և Կրէտէն իր ձեռքից փախչի։ Բայց պէտք է գիտնաք որ այս տարի Կրէտէյի դիւանագէտները աւելի եռանդով են աշխատում քան անցեալ տարի և Անգլիական այս տեղի դեսպանատունը լեցրել են իրենց աղերսագիրներով ու խնդիրներով.... Ահա Ձեր դիւանագիտութիւնը, ահա Ձեր քաղաքականութիւնը և մեծ պետութիւններին դիմումներ անելը....

Բոլորովին տարբեր բան է՝ լրագրութեան և զանազան միտինգների միջոցով դրաւել օտար ազգերի, ժողովուրդների (ոչ կառավարութիւնների, որովհետև դա անկարելի է) համակրութիւնը թէ դէպի մեզ և թէ դէպի մեր դատը, և մենք, Հնչակեաններս, այդ ոչ միայն հարկաւոր, այլ նոյն իսկ անհրաժեշտ ենք համարում։ Դրան ապացոյց կարող է լինել այս տարեան յուլիս 15 ի հանդէսը Աթենքի և ուրիշ քաղաքների մէջ։

Ահա այն բոլոր բացատրութիւնները որ կարեւոր համարեցի տալ «Հայք» ի ընթերցողներին։

Ընդունեցէք, յարգոյ Խմբագիր, Ցարգանացս խորին հաւատիքը։

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.

Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ Աթենքում։

16 հոկտեմբ. 91 թ Աթենք.

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

եւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Սոսիալիսմը, որ հայերէն ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ անուամբ մկրտուած է, դարուս մեծագոյն ընկերական երևոյթներէն մին է, և այժմ ա՛յնքան ընդարձակ միջազգային տարածում ընդունած է և ա՛յնպիսի ահագին ազդեցութիւն դառնած՝ որ իմաստասէրներուն, քաղաքագէտներուն և վեհապետաց ալ խնամոտ ուշին առարկայ դարձած է։ Կիպրոսի նման երիտասարդ կայսր մի անգամ այդ խնդրէն չկրցաւ խուսափիլ։ Պիսմարքի անկումն յառաջ բերող ազդեցութեանց մէջ մեծ բաժին ունեցաւ գերմանական ընկերվարականութիւնն։

Արժան էր ուրեմն որ ընկերվարականութեան վերայ գաղափար տայինք մեր ընթերցողաց բաւական ընդարձակօրէն, այլ որովհետև մեր թերթի անձուկ էջեր չեն ներեր, ստիպուած եմք միայն համառօտ նշմար մի ընծայել, որպէս զի կարող լինիմք պատասխանել մեր ընկերվարական թղթակցին և ցուցնեմք այդ խնդրոյ

յարաբերութիւնն մեր ազգային խնդրոյն հետ ։

Ընկերվարականութիւնն անջատելով զինքն շրջապատող երկրորդական խնդիրներու կեղեւէն, կը գտնեմք անոր կորիզն, որ է — փոխանակ հողն եւ դրամագլուխն ի ձեռս փոքրամասնութեան մի թողլու, եւ գործաւորաց ահագին մեծամասնութիւն մի օրըստօրէական աշխատութեան չաբաթականին կարօտ պահելու, վերակազմել ընկերութիւնն տնտեսական հաւասարութեան հիմանց վերայ, հողն եւ դրամագլուխն ընկերութեան հաւաքական ստացուածք ընել, եւ ընկերակցեալ աշխատութեամբ արդիւնաւոր գործելով զայնս՝ արդիւնքն բաշխել ամենուն ըստ պիտոյից ։

Այս դրութեան մէջ անհատական դրամագլուխ եւ անհատական կալուած կամ հող չպիտի գտնուի. ոմն իր հողոյն վարձքովն, միւս իւր դրամին տոկոսովն չպիտի ապրի՝ մինչ անդին բիւրք կ'ընդունին իրենց աշխատութեան թոշակն միայն յաճախ ընդհատեալ եւ անբաւական ։

Ընկերվարականք կը պնդեն թէ այդ դրութիւնն վաղ կամ անագան պիտի տիրէ աշխարհիս ։ Ինչպէս որ գերութիւնն եւ ճորտութիւնն անցած են, այնպէս ալ թոշակաւոր գործաւորութիւնն պիտի անցնի ։ Ինչպէս որ եկեղեցական եւ աւատական ազնուապետութիւնն անցած են, այնպէս ալ դրամական ազնուապետութիւնն պիտի աներեւոյթ լինի յառաջդիմութեան հոսանաց առջեւ ։ Նոցա համոզմամբ քաղաքակիրթ աշխարհի յաջորդ ընկերական ձեւն պիտի լինի ընկերվարականն, իբրեւ անհրաժեշտ արդիւնք կամ զարգացեալ անդրադոյն աստիճան ընկերական շրջափոխութեան ։

Մենք այնչափ բան կը համարիմք այս մասին, եւ չեմք ուզեր մխել ի քննութիւն այն բազմապիսի հարցերու որոց ծագում կու տայ ընկերվարական վարդապետութիւնն ։

Միայն կ'ուզեմք մեր Հնչակեան եղբարց ընթացքն քննել, տեսնելու համար թէ տեղի կա՞յ արդեօք ընկերվարական քարոզ կարդալու մեր Ազգին հիմակուընէ ։

Եւ կը պնդեմք թէ տեղի չկայ ։ Ինչո՞ւ ։ վասն զի Օսմանեան Հայաստանն, որոյ համար են մեր ծրագիր եւ ձգունք, չգտնուիր տնտեսական այն պայմանաց մէջ ուր Եւրոպա եւ Ամերիկայ կը գտնուին զարդիս ։ Մեր Հայրենեաց մէջ դեռ չկայ ճարտարարուեստութիւն, գործարան լի հազարաւոր գործաւորօք, դրամատէր իւր միլիոններով ։ Դեռ մեր երկրի մէջ ընկերութիւնն հասած չէ զարգացման այն վիճակին յորում հողն ու դրամագլուխն սակաւուց սեպհականութիւն դարձած, եւ ժողովրդեան անհուն մեծամասնութիւնն թոշակաւոր գործաւորի վիճակին մէջ ինկած լինի ։ Գիւղացին ընդհանրապէս իւր հող կը մշակէ, քաղաքացին ունի իւր փոքր դրամագլուխ որով կը գործէ իւր արհեստ, կօշկակարութիւն, դարբնութիւն, դերձակութիւն, ոսկերչութիւն, մանուսայագործութիւն կամ այլ արհեստ, եւ իւրաքանչիւր արհեստաւոր, կէտ արժանի ուշադրութեան, է վարպետ իւր խանութի մէջ, կը կատարէ գործին ամբողջն՝ ազատօրէն հետեւելով իւր խելքին ու ճաշակին ։ Նորա աշակերտն ես օր մի իւր կարգին վարպետ կ'ելնէ, եւ ինքնագլուխ գործ ընել կ'սկսի ։

Ըստ ընկերվարականաց այժմու ահագին դրամագլխով ահագին ընկերութիւններն միջակայ պայման եւ նախաշաւիղ են գալիք ընկերվարականութեան. նոյնպէս Տէրութեան հետ զհետէ աւելի միջամտելն ընկերական խնդրոց եւ տնտեսական գործողութեանց՝ կը նշանակէ թէ Տէրութիւն ընկերվարական հանգամանք կ'առնու աստիճանաբար ։ Միւս կողմանէ հասարակ գործաւորաց բազմութիւնն հանրային գործոց ընթացքն կը դիտէ գրեթէ ձրի լրագրութեան միջոցաւ, եւ հաւաքական գործողութեան կը վարժուի քուէարկութեամբ, գործաւորական տօնի օրեր թափօր յօրինելով, գործարանաց մէջ բազմութեամբ աշխատելով, գործաւորական ահագին միութիւններ կազմելով, միասնական գործադուլ ընելով եւ խաղաղօրէն պայքարելով դրամագլխոյ հետ ։

Արդ, կը հարցնեմք թէ վերի պայմաններուն ո՞րն կը գտնուի մեր երկրի մէջ ։ Ոչ դրամագլուխ կոչուած ահագին ճիւաղն կայ, ոչ՝ գործարան իւր վիթխարի մեքենաներով որ գործաւորին ձեռքէն հետ զհետէ աւելի գործ յափշտակէ մէկ կողմանէ, ո՛չ ալ գործաւորաց բազմութիւն կայ ընկերաբար եւ հաւաքօրէն գործելու ոտիպողական կրթութիւնն ընդունող՝ միւս կողմանէ ։

Ուրեմն Հայաստանեայց համար վաղաժամ է ընկերվարական խնդրովք զբաղիլ ։ Այն ճարտարարուեստական մեծ յեղափոխութիւնն որ Եւրոպայի մէջ անցեալ դարէն ի վեր գործուած է, դեռ սկսած ալ չէ մեր երկրի մէջ, որ այդ տեսակէտով գոնէ դար մի ետ է Եւրոպայէն ։ Ինչո՞ւ ուրեմն խօսինք դարմանի մեր վերայ երբ հիւանդութիւնն չկայ դեռ. երբ ոչ միայն հիւանդութիւնն չըկայ, այլ եւ ոչ իսկ սկսած է այն առողջ զարգացում որոյ չափազանց կամ ծայրայեղ կատարելութիւնն պիտի գոյացնէ վերջապէս ախտաւոր վիճակ ։

Միթէ ինքն իրեն հակասած չ՞լինիր ընկերվարական մի եթէ ընկերվարականութիւնն իբրեւ ինքնեկ հետեւանքն համարի ներկայ ընկերական զարգացման աստիճանին յԵւրոպա, եւ միանգամայն ընկերվարականութեան սերմ սերմանէ Հայաստանի մէջ ուր տակաւին զայն ընդունելու հողն գոյութիւն չունի ։ Միթէ մանուկ մի 15 տարեկան յինելէ առաջ հարկ չէ՞ որ 14 տարեկան լինի ։ Միթէ պտուղ լինելու համար հարկ չէ՞ որ նախ ծաղիկ լինի ։

Հայաստանի ժողովուրդն ընկերվարականութիւնն հասկնալու անգամ անկարող է ։ Միթէ 8 տարեկան մանուկն ընդունա՞կ է երիտասարդի սիրային խօսքերն եւ հառաչանքն հասկնալու ։ Ի հարկէ նա պիտի կարծէ հասկնալ, բայց բոլորովին տարբեր բան պիտի հասկնայ ։

Հայաստանեայք ալ եթէ ընկերվարական սերմունքն ընդունին այժմու անպատրաստ հողի վերայ, պիտի բուսուցանեն ո՛չ ընկերվարական այլ ո՛ գիտէ ինչական սոսկալի արդիւնք ։ Նոյն սերմունք Ռուսական անպատրաստ հողի վերայ ոչնչականութիւն արտադրեցին ։

Այս յոյժ էական կէտի վերայ, այսինքն հայկական մտաց կուսութեան եւ ահագին յուռթիութեան վերայ պարտիմք մեր մօտակայ թուոց միում մանաւորապէս խօսել, ուստի եւ այժմ այս յօդուած չափազանց չերկարելու համար (զի գիտեմք թէ « Հայք » ի ընթերցողաց մեծ մասն չախորժիր երկար յօդուածներէ) կը վերջացունեմք դիտել տալով թէ պէտք է այժմ խօսել Հայոց իրենց անմիջակայ պիտոյից եւ ներկայ վիճակի մասին, այն է քաղաքական եւ վարչական բարենորոգութեանց մասին, վասն զի մինչեւ որ կառավարական բարեփոխութիւն չլինի, անհնար է թէ ընկերական բարեւոքումներն իրագործուին ։ Հայն հող ունի իւր երկրի մէջ, ջանանք զինքն ազատել աւազակաց յափշտակութիւններէն, եւ նա պիտի ազատի միանգամայն սարաֆներուն ձեռքէն, եւ տնտեսապէս զարգանալով պիտի զարգանայ նաեւ մտաւորապէս եւ բարոյապէս ։

Այժմ հեռաւոր բաներու վերայ Հայոց խօսելով թիւրիմացութեանց տեղի կու տամք, եւ մանաւանդ նոցա ուշն եւ ոյժը — որ անսահման չէ — կը ցրուեմք ։ Մեզ պէտք է կեդրոնացում ոյժերու. պէտք է հաւաքել լուսոյ եւ ջերմութեան ճառագայթներն այն չղթայակերպ սառուցներուն վերայ որք կ'անդամալուծեն զՀայն ի ներկայիս ։

ՆԱՄԱԿ ԵՐԱՆԵԼԻՆ

Երզնկայ 13 Մեպտ. 1891

Տէրսիմի Բրդերն նորէն ապստամբական շարժում մը սկսան վերջերս։ Հիւսէյին Պէկի մահուանէն յետոյ Կառավարութիւնն կը յուսար աւելի հանդարտ վիճակ մը հաստատել այդ բազմայոյզ լերանց վերայ, և արդարեւ փորձեց ալ նորա որդին համոզել որ լեռնային պէկութիւնն փոխանակէ քաղաքային և զինուորական պատիւներու, ծառայէ Օսմանեան բանակին մէջ և շուտով հասնի փաշայութեան։ Պէկազն Բուրդն այդ առաւելն չուզեց։ Յայնմ հետէ երբեմն Թրքեր սպանուած գտնուեցան Տէրսիմցիներէն։ Բրդայց դժգոհութեան մեծագոյն առիթն է տուրքն, զոր Կառավարութեան ուզածին չափ կամ պէս վճարել կը դժկամակին։ Հարկ եղաւ զօրք յղել Տէրսիմ, և սակայն մեծ յաջողութիւն չունեցաւ զօրքն. միրալայ մը և մի քանի զինուոր արդէն սպանուեցան։ Այժմ Օսմանցիք ձեռնարկած են այրել բոլորովին այն ահագին անտառն որ իրենց զինուորական դարձողութեան արգելք կը սեպուի։ Ցուսալի չէ սակայն որ այնուհետև գտնէ յաջողին, զի Բրդայց դիրքն անառիկ է, և միայն վէմեր գլորելով իսկ կրնան ջախջախել զօրաց այժն։

Տէրսիմի Բրդերն Հայոց հետ սիրով և բարեկամօրէն կը վարուին, նոցա հակառակութիւնն Թուրք տարրին դէմ է։ Բաղաքիս հայ երիտասարդութեան մեծամտանութիւնն ծանծաղ ազդասիրութիւն մը միայն կը տածէ, և օտար տէրութեանց կողմէն փրկարար միջամտութեան մը յուսովն կօրորին։ Խնամսվանիլ պէտք է՝ սակայն՝ թէ առջի վրայ քիչ մ'աւելի սրատութիւն կը տեսնուի Հայոց մէջ. հին ժամանակի կրաւորական կացքն և երկչոտ տրամադրութիւնն զգալապէս եղանակաւորուած է. Հայն ալ այժմ կը զարնէ իրեն զարնող Տաճկին։ Անցեալ տարի, Կարնոյ կոտորածէն յետոյ գոգռումն այնքան սաստիկ էր քաղաքիս մէջ որ բոլոր գիշերն ոստիկան զինուորներ կը հսկէին փողոցաց մէջ և չէին թողուր որ մութենալէն յետոյ ո և է Թուրք Հայ թաղերու մէջ մտնէր կամ ո և է Հայ թուրք թաղերու մէջ գտնուէր, վասն զի կը վախցուէր թէ փոքր դէպք մը կրնայ մեծամեծ խառնաշփոթեանց առիթ լինիլ։

ՍԱՐ

ԱՐԱՔՍ ՀԱՆԴԷՍՆ

Շնորհակալութեամբ ստացանք «Արաքս» Պատկերազարդ Հանդէսի երրորդ տարւոյ Բ. գիրքն, որ կը բաղկանայ 140 երեսներէ և 18 ընտիր պատկերներէ։ Հոն կը գտնեմք Հայկական Խնդրոյ վերայ կարեւոր գրուածներ, հայ քաղաքաց տեղագրութիւն, երեւելի Հայերու կենսագրութիւն, կարեւոր գրքերու վերայ մատենախօսութիւն և հայկական ընտիր բանաստեղծութիւններ։ Նկարներն կա՛մ հայկական տեսարանաց են կամ հայ ականաւոր նկարչաց, Այվազովսկիի, Բաշինջաղեանց գործ ընդհանրապէս։ Ամբողջ «Արաքս» հմուտ հայ հեղինակներու աշխատակցութեամբ գրուած է, և կը ծառայէ իւր նպատակին որ է «Հայի անցեալ և ներկայ կեանքի և հայ աշխարհի բազմակողմանի ուսումնասիրութեամբ նպաստել հայ անհատի մտաւորական զարգացման և ինքնաճանաչութեան, իբրև հայ ազգայնութեան անդամի։»

«Արաքս»ն տեսնելով մեր առաջին սպասաւորութիւնն եղած է սքանչացում և ուրախութիւն, զի այդ Հանդէս հսկայ յառաջդիմութիւն մ' է հայ Մամլոյ մէջ, և իբրև տիպար օրինակ կրնայ նկատուիլ թէ որպիսի պարտին լինիլ այժմու Հայ հանդէսներ։ Մեր երկրորդ սպասաւորութիւնն եղաւ տխուր, կարդալով «Արաքս»ի նիւթական անձկութեան մասին, որ իւր ծախքերն չկրնար ծածկել։ 663 ռուպլի վնաս կ'ընէ հրատարակիչն այս տարի։

Ջերմապէս կը յանձնարարեմք այս գերազանցապէս հայկական Հանդէսն մեր հայրենասէր երիտասարդութեան, և մեր ունեւոր դասակարգին, բաղձալով որ Մեծ. Գուրամիրեանց ծախուց ներքև չընկճի, այլ քաջալերեալ շարունակէ իւր գերընտիր հրատարակութիւն։

ՈՒՑԳԻՒ ԴԻՊՔՂԻ ՎԵՐՏՑ

Քանի դու մեր մէջ կեանքով լի էիր,
Դու միշտ հալածուած, տանջի էիր.
Բայց հէնց առ Հարս դնացիր, հեռացար,
Դու մեր ազգային հանճարը դարձար։
Հայքս, որ հոգւով վաղուց ենք մեռած,
Միշտ դիակներ ենք մեր կեանքում սիրած.
Սուտ չէր խօսքը մեր ասած պսպեռէն—
Գնա՛ դու մեռիր՝, որի՛ քեզ սիրեմ։

ԲԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ.
(ԱՐԱՔՍ)

ԻՄ ՁԵՌՆՏԵՏՈՒ

Հռչակաւոր երգիծաբան Պարոնեանի անտիպ մէկ յօդուածն հրատարակուած է Տփխիսի «ԱՐՁԱԳԱՆՔ»ին մէջ։ Ողբացեալն Պարոնեան 1880 ին գրած է զայն «փորձ»ի համար, բայց ձեռագիրն տարաժամ հատած լինելով ի ձեռս խմբագրին, պահպանուած էր և այժմ լոյս տեսած է «Արձագանք»ի մէջ (թ։ 30 և 31) որ «փորձ»ի յաջորդած է խմբագրութեամբ դարձեալ Մեծ. Տ. Արգար Յովհաննիսեանի, արժանակիչ խմբագրի։

Հետեւեալ սքանչելի կտորներն կը քաղեմք այդ յօդուածէ։

Մայրաքաղաքիս մէջ դիշեր ասեն քիթով պարելը վատնգաւոր է։ Այս գիշեր Թուրք մը Հրեայի մը վրայ յարձակելով կողոպտել ուզեց զայն, բայց խեղճին վրայ փող չի գտնելուն վրայ, Թուրքը բարկացաւ և ապէկ մը ծեծելէն ետքը խեղճ Հրեային քիթը կտրեց ու փախաւ։

Եղելութիւնն ոստիկանութեան իմաց տրուելուն պէս մի ոստիկան չարագործը ձերբակալեց։ Քիթն իւր տիրոջն տրուեցաւ։

Այս արդար դատաւորին ըսելիք ունի՞ք. եթէ գողցուածն գրամ ըլլար՝ հրեայն չէր կրնար գրամն վերստին ձեռք բերել, թող աղօթք ընէ, որ քիթն էր գողցուածը։

Հայրի՛կ, առջի օրը կըսէիր, թէ կարմրնալն ամօթխածութեան նշան է։

— Այ՛ո, երբ որ մէկն իւր ըրածին վրայ կը խպնի և երեսն կը կարմրի, ըսել է թէ պարկեշտ է։

— Ըսել է թէ մայրիկս շատ պարկեշտ է։

— Ինչ՞ու։

— Վասն զի ամեն առաւ իւր երեսն կը կարմրցունէ։

Ո՞վ գոյներ, մի՞թէ դուք ալ այսչափ կը փոխէք եղեր ձեր նշանակութիւնը։

4 Յունիս — Լրագիրները մեծ գովեստով խօսած էին Ս. Պատարքին երկու արձաններուն վրայ զորս երկու ազգային գեղարուեստագէտ երիտասարդներ շինելով ի սեռ հասարակութեան դրած են Ապտուլլահ եղբայրներու դործարանը,

Հետաքրքրութեան համար այսօր դնացի այդ արձանները տեսայ և բարկացայ, վասնզի լրագիրներէ խաբված ըլլալս անմիջապէս զգացի

Այս արձաններէն մին, որ Իտալիա ուսում առած երիտասարդի մը գործն է, բնաւ չնմանիր Պատրիարքին, Նորին Սրբազնութեան եղբայրներուն ալ չնմանիր։

Զկրցի համբերել, մօտեցայ արձանին և անոր ականջն ի վար փսփսացի.

Պարոն արձան, զուարթ երես

Համակրական և աղուոր ես,
Այլ ինչ օգուտ չունիս լեղու
Որ ըսէիր ինձ ս'վ ես դու։
Միւսն, որ հոս ինքնիրմէ ուսած երիտասարդի մը գլուխ գործոցն է, քիչ մը արձանին իսկականին նմանութիւնը կը բերէ թէպէտև, բայց այնչափ ուժև կերպով շինված է որ,
Թէ լրագիր մայսպէս գծէր
Պատրիարքին ներքին պատկեր՝
Անմիջապէս իւր խափանման
Կընդունէր նա Դոնէն հրաման։
Այսպէս են մեր թատրոնի հեղինակներէն շատերն ալ. իրենց ուզածին պէս կը ներկայացունեն անձերը և կը կարծեն թէ մեծ գործ տեսած են։ Արշակ մը, Հայկ մը, Սանդուխտ մը պէտք է այնպէս ներկայացվի ինչպէս որ է և ոչ թէ ինչպէս որ կը փափաքին յարգոյ հեղինակները։

Դեսպանախորհուրդն այսօր բացվեցաւ Պերլին։ Այս գիշեր Պիսմարք իշխանին տունը գինի պիտի խմվի։

Թուրք կառավարութիւնն ալ անչուշտ այս երեկոյ հեռագրով անուշ հրամեցիք պիտի ըսէ գինի խմողներուն, որք գինիին վրայ պիտի կլլեն անչուշտ.. Եանիան։

6 Յունիս — Մայրաքաղաքիս մէջ այսօր սպանութիւն տեղի չունեցաւ. կը կարծուի թէ ոստիկանութեան նախարարին պատուանշան մը տրուի վաղը։

7 Յունիս — Անասելուի սովելոց համար մեծ վիճակահանութիւն մը պիտի լինի... գալ տարի։

Ցիշեալ վիճակահանութեան գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկէ գաւառները յորդորելու համար սովեալները որ համբերեն և անօթութենէ չմեռնին մինչեւ որ իրենց հաց ղրկվի։

Կը յուսանք որ մեր ազգայիններն կը համակերպին այս շրջաբերականին։ Քալ գիտեն արդէն նոքա որ այս սովն եթէ Եւրոպա լինէր շատ աւելի զոհ կը տանէր իւր հետ. փառք տալու ենք որ Թուրք բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ հետէ նախատեսած լինելով այս սովն, ազգու միջոցներ ձեռք առած էր իւր հաւատարիմ հպատակներն անօթութեան վարժեցնելու

8 Յունիս — Սովեալներուն օգնելու համար համբայ մ'ալ ես կառաջարկեմ, այն է սովեալ գաւառներէ հեռայնել այն մարդերը որ շատ կուտեն։

Հետևապէս կառաջարկեմ վանահայրները Պոլիս կանչվին, մանաւանդ Մամբրէ եպիսկոպոսը, որ Մշոյ վանքը ամբողջ կերաւ։

9 Յունիս — Վեց Տէրութիւնները կ'ըսեն Բ. Դրան։
— Եանիան Յունաստանին տուր։

Բ. Դուռը կը պատասխանէ Յուներուն այն լեզուաւորով ատոնք պատասխանեցին ժամանակաւ Քոէրքսէսին.

— Էյ՝ ինչ անիմէ աս։

11 Յունիս — Քահանային մէկը... եկեղեցւոյն մէջ դանձանակէն մէճիտէ մը սխալմամբ գրպանը նետած պահուն ընկերը տեսաւ։ Կէս ժամ վիճաբանութենէ ետքը մեճիտիեն իրենց մէջը բաժնեցին։

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

— Հայկ. Մխիթեան նոյ. 7 ի նիստն յոյժ շահեկան էր շնորհիւ Տր. Այվազեանի բանախօսութեան ԶԲՆՈՑ և ԶԲՆՀԱՏՈՒԹԵՆԷ, որոյ ամփոփումն պիտի տամք յաջորդ թուով։

Նոյ. 21 նստին մէջ պիտի ատենախօսէ Տ. Մ. Բարունակեան, և դեկտ. ի առաջին նստին մէջ՝ Տ. Գ. Գասպարեան։

Կարսի Նահանգի Բէգլի-Ահմէտ գիւղից յեղ գրում են. «Հաստատ աղբիւրից լսում ենք, որ Կարսի Նահանգի հայ գիւղերի յոյն, մայական և քիւրդ տանուտէրեր և ստարշինաներ մինչև յունվար ամիսը կարձակվեն իրանց պաշտօններից և Նահանգի հայ գիւղերը նորից կը կառավարվեն իրանց նախկին ձևով, առաջվայ նման՝ այն է հայ համայքներից ընտրուած տանուտէրերով, դպաուորներով և ստարշիններով։»

Պետական խորհրդի ներկայ նստաշրջանում, «Նով. Վրեմեա» լրագրի խօսքերով, պետական խորհրդի քննութեանը կառաջարկվի մի նոր կանոնադրութիւն ամենայն հայոց կաթողիկոսի դէպի բարձր կառավարութիւնը ունենալի յարաբերութիւնների մասին, որ մշակվել է ներքին գործերի մինիստրութեան օտար դաւանութիւնների հոգեւոր գործերի դէպարտամէնտում։

ՄՇԱԿ

ՀԱՅԲԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԲ

Նուիրատուութեանց ցանկն որ ի տարեւ՝ բացատրութիւն մի կը պահանջէ։

«Հայք» իւր առաջին տարւոյ մէջ 60 լիրայի բաց կը թողու իրեն դէմ յատկապէս յարուցուած և աննախատեսեալ խոչընդոտներ առ ոտն կոխելու ստիպուած լինելով։ Թերթի Խմբագիրն ինքն հայրենասիրական հրպարտութեամբ պիտի լնոյր այդ բաց ամբողջովին լռիկ եթէ կարենար, այլ շնորհակալութեամբ կ'ընդունի օժանդակութիւնն այն նուիրատուաց որք կու գան այդ բացն իջուցանել նորա տարողութեան համեստ չափերուն։

Ոչ միայն շնորհակալեաց այլ և շնորհաւորութեան արժանի են «Հայք» ի նուիրատուք։ «Հայք» անկախ անհատի մի ազատ ձեռնարկն է, պարզ թերթ մի և ոչ այլ ինչ, այսինքն Ազգային Խնդիրն քննելու, գործիչներն ու գործիներն կշռելու, անաչառ քննադատութեան և ըզգօն ու արդար հայրենասիրութեան ոգին արծարծելու գործի մէջ այն։ Առանց պոռոտահունչ դաշնակցութեան մի անունն առնող կամ Ազգն ու Հայրենիքն փրկելու կոչումն ստանձնող խոշորանուն ընկերութեան մի բերանն լինելու՝ կը կենայ «Հայք» իւր խոնարհ պարզութեամբ, այսու ամենայնիւ կ'արժանանայ ամեն գաղթականութեան մէջ զգօն և մշակեալ հայրենակցաց համակիր ուշադրութեան և ոչ սակաւուց նիւթական նպաստին. այս կը նշանակէ թէ հասուն և իմաստուն Հայերու թիւն կարծուածին չափ փոքր չէ։

Ահաւասիկ նուիրատուաց պատուական անուանք.— Հայրենասէր ոմն Փարիզէն՝ 10 թալէր. Տիար Գ. (Նիւ Հէյվընէ) 5 թ., հայրենասէր ոմն Ուսթըրէն 5 թ., և ի ձեռն հայրենասէրին՝ այլ և այլ համակրողք՝ 7 թ. 75 սէնթ. Նոյնպէս Ուսթըրէն, Նիւ Եորքէն Տ. Ի. 2 թ., Տ. Ա. 3, Տ. Ե. Մաթիկեան 10 թ., այլ և այլ համակրողք՝ ի ձեռն Տ. Ի. 2 թ. 50 սէնթ., Հնդկաստանէն Տ. Ճօն՝ 2 թ. 86 սէնթ., Գահիրէէն ի ձեռն կամ յաձ էն Տ. Ն. ի 8 թ., գումար 56 թալէր 11 սէնթ։

— Շնորհակալութեամբ ստացանք ի հեղինակէն Արժ. Հայր Պաւղոս Վ. Գաֆթանէ իւր երկու հատոր ՆՈՐ ՏԱՐԲԱԲԱՆՈՒԹԻՒՆ, աշխատասիրեալ ի պէտս ազգային վարժարանաց։ Այս գործոյ վերայ կը մատենախօսեմք յաջորդ թուով։

— Շնորհակալութեամբ ստացանք ԼԵՌԵՆՑ ի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՆ և ՓԱԽՍՏԱԿԱՆՆ։

Շնորհակալութեամբ ընդունեցինք Փրոֆ. Գր. ԽԱԼԱԹԵԱՆԻ ընտիր քննադատութիւնն «Մովսէս Խորենացու ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ Խորէն Ծ. Վ. Ստեփանէի թարգմանութեամբ։»

— Ըստ Թայմզի Վիէննայի թղթակցին վստահելի տեղեկութեանց Եէմէնի ապստամբք թուով 40 հազար են, 20 գնդի բաժնուած, ընդ հրամանատարութեամբ Շէյխ Համիա—Էսատինի։ Մի քանի ամրութեանց տիրած են արդէն և Թուրք բանակին մեծ մասն ալ պաշարուած է գաւառին գլխաւոր քաղաքին մէջ։ Թուրք հրամանատարն 20 հազար զօրք աւելի խնդրած է Դոնէն։ Ապստամբաց պետն կը պահանջէ Թուրք կառավարութենէն որ հինգ տարի բնաւ տուրք չառնուի իրենց ժողովրդէն, և որ այդ ժամանակէն յետոյ ալ տուրքերն չափաւորին նաև՝ դատաւորներն ընտրուին բնիկ միւսիւլմաններէն և որ բնիկ ոմն Եէմէնի քաղաքային կառավարիչ անուանուի։ Թուրք հրամանատարն ծանուցած է թէ նախ պարտին ապստամբք վար դնել զէնքերն որպէս զի բանակցութիւնք սկսին։

— Նոյ. 9 ին Ս. Փէթրսպուրկէն կը հեռագրեն հետեւեալն։ Ռուսիա բաղձալով պատուել իւր այն զինուորներ որք վերջին Թուրքեւռուս պատերազմին մէջ սպանուեցան և որք թաղուած են ի հող Թուրքիոյ, վերջերս խնդրեց Բ. Դոնէն թոյլ տալ որ Ռուս իշխանութիւնք հանեն մեռեալներն և փոխադրեն ի Սան Սթեֆանոյ, ուր յիշակերտ մի պիտի կանգնուէր ի պատիւ նոցա։ Նաև Ռուսիոյ դիտաւորութիւնն էր կառուցանել Յունական եկեղեցի մի ի յիշատակ անոնց որք հայրենիքայ համար տուած է-

ին իրենց կեանք ։ Բայց այս բոլոր ծրագրեր անօգուտ եղան վասն զի Դուռն մերժեց թոյլ տալ որ մարմիններն հանուէին ։ Փեթերպուրկի մէջ շատ դգուռւմն կը զգացուի այս մերժման համար ։

ԱՐԱՔՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ ՎԵՑԱՄՍԵԱՑ

Իւրաքանչիւր թիւ իբր 200 երեսներէ բաղկացեալ Տարեկան բաժանորդագինն է 3 ռուբլի (իբր 2 թալեր 40 սէնթ) Հասցէն է

Simeon Goulamiriantz. Rue Stremiannaja. M. No. 1 Log No. 15 St. Petersbourg. si(Ruse.)

LANDMAN & SONS,

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՄԱՐԴՈՑ ԵՒ ՏՂՈՑ ԶԳԵՍՏՈՒՑ

ՎՍՏԱՀԵԼԻ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ.

ԵՐՐՈՐԴ ԷՎԻՆԻՈՒ, ԱՆԿԻՒՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ

TANQUEREY

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

63 and 65 W. 14 th St. Corn. Sixth Ave. New York.

Կուզե՞ս ¾ բնական մեծութեամբ մէկ կենդանագիրդ ծրագրչեալ (crayon) և 12 օրինակ լուսանկար պատկերդ, ՄԻԱՅՆ ՀԻՆԳ ԹԱԼԷՐ ՎՃԱՐԵԼՈՎ. ներկայացուր ղայս կտրօն վերոյիշեալ հռչակաւոր արուեստանոցն ։ վճարումն պիտի ընես հետեւեալ կերպով.

Երբ նստիս լուսանկարդ հանելու համար......$2.50

Երբ կենդանագիրդ և լուսանկարքդ առարտին..2.50

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն ։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 Seventh Ave., bet 26 th & 27 th Sts., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ ՈՒՍԹԸՐԷՆ

H. A. BASSETT

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿՕՇԻԿԻ

259 MAIN ST. WORCESTER, MASS.

Աղէկ ապրանք և աժան ։

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Խարբերդ, Տիգրանակերտ, Մալաթիա, Կ. Պոլիս Տրապիզոն, Մարսիլիա, և Տաճկաստանի ուրիշ քաղաքներ, դրամ կը ղրկեմ ապահով և գոհացուցիչ պայմաններով ։

Դիմել առ Տ. Մ. Շուշանեան

D. M. Shooshan 41 Exchange St. WORCESTER MASS



JOSEPH LAJOIE

ԺԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ

231 FRONT ST.

WORCESTER MASS

Այս քաջածանօթ վաճառատան մէջ լաւ ապրանքներն կը տրուին չափաւոր գնով, և ժամացոյցներ կը նորոգուին խնամով ի ձեռն հայազգի ճարտար ժամագործ Տիար Փրուտի, որ նոյն վաճառատան մէջ գործելով անգլիերէն խօսիլ չգիտցող Հայոց մասնաւոր դիւրութիւն կ'ընծայէ ։։

O. F. HARRIS

ԱԵՏԱՄՆԱԲՈՅԺ

476 Main St. Worcester, Mass.

ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է ԱԿՌԱՆԵՐՈՒ

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK

No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սէնթի փոքր գումար կ'ընդունի ։ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց առաջին օրէն կը հաշուի դրամի չահն 800ին 4 ։ Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4 ։ Շաբաթ օրերն՝ 9էն 1 ։

E. B. STODDARD, President.

J. STEWART BROWN, Freasurer.

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ ԵՒ ՆԱՒԻ ՏՈՄՍԱԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս ։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանգայի միջոցով ։ Նաև գոհացուցիչ գներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուքիոյ ամէն նաւահանգիստներէն գալու և երթալու համար Թրիէսթի ճամբով ։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի ։ Պէտք է դիմել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՂԱԳՈՐԾ

(հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LOUIS MULLER

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԻՆԻՈՑ ԵՒ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԵԱՑ

304 WEST 38 th STREET

8դ. Ավինիւին մօտ Նիւ Եորք

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ